



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 43

16 ապրիլի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետական կուսակցության կենտրոնական ընտրական շտաբի պետ Հ. Աբրահամյանի իրազեկումը 2012 թվականի ապրիլի 29-ին ժամը 9⁰⁰ –ից ժամը 12³⁰-ի սահմաններում ընտրողների հետ հանդիպում կազմակերպելու նպատակով հանրային հավաք անցկացնելու մասին և համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության լիարտոնական օրենսգրքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հավաքների ազատության մասին օրենքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 21-րդ հոդվածների

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետական կուսակցության կենտրոնական ընտրական շտաբի պետ Հ. Աբրահամյանի իրազեկումը ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում 2012 թվականի ապրիլի 29-ին ժամը 09⁰⁰-ից ժամը 12³⁰-ի սահմաններում քաղաքային մշակույթի տանը, ինչպես նաև խաղաղության պուրակի և նախկին կինոթատրոնի հարևանությամբ գտնվող հրապարակում ընտրողների հետ հանդիպում և հանրային հավաք անցկացնելու մասին:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումն անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև այդ որոշումը փակցնել քաղաքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքապետարանի վարչական շենքում այն փակցնելու պահից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ